

**ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների
լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նստաշրջան Դուբնայում
/2008 թ. նոյեմբերի 21-22/**

2008 թվականի նոյեմբերի 21-22 ՌԴ Դուբնա քաղաքում տեղի ունեցավ [Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի](#) (ՄՀՄԻ) անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նստաշրջանը, որին մասնակցելու նպատակով նոյեմբերի 20-23-ը եռօրյա այցով Դուբնա էր մեկնել ՄՀՄԻ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը:

Նստաշրջանի օրակարգային հիմնական թեման էր նոյեմբերի 18-19-ը ՄՀՄԻ ֆինանսական հանձնաժողովի նիստում ընդունված ՄՀՄԻ-ի 2009 թվականի բյուջեն, ինչպես նաև ինստիտուտի 2010- 2016 թվականների զարգացման պլանը:

Լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովը հաստատեց ինստիտուտի 2009 թվականի բյուջեն, որը կազմելու է 68.71 մլն ԱՄՆ դոլար, և հավանություն տվեց ինստիտուտի զարգացման 7-ամյա պլանի (2010-2016 թթ.) մշակմանը: Նոր 7-ամյա պլանը պետք է հիմնված լինի ինստիտուտի ռազմավարության, ինչպես նաև առաջիկա բյուջետային կանխատեսումների վրա: Մշակվող 7-ամյա պլանում հիմնական շեշտադրումը պետք է դրվի հիմնարար հետազոտությունների զարգացման վրա, ինչպես նաև այդ ծրագրում պետք է ներառվեն այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են կրթական և ինտելեկտուալ ծրագրերը, ենթակառուցվածքների զարգացումը, կադրային և սոցիալական քաղաքականությունը:

Նստաշրջանի ընթացքում որոշվեց 2010-2016 թթ. զարգացման պլանը լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել 2009 թ. մարտին, իսկ հաստատմանը 2009 թ. նոյեմբերին:

Ինչ վերաբերում է բյուջեին. ՄՀՄԻ բյուջեի եկամտային մասն առաջանում է՝

1. անդամ պետությունների ներդրումներից, որը հաշվարկվում է՝ ելնելով երկրի բյուջեի չափերից՝ ՄԱԿ-ի սանդղակին համաձայն,
2. երկրների ամենամյա վճարումներից պարտք մնացած գումարներից,
3. գիտատեխնիկական համագործակցության նպատակներով կնքված համաձայնագրերից ստացվող միջոցներից:

2009 թ. ՄՀՄԻ բյուջեի հիմնական չափորոշիչները հաստատվել էին դեռևս 2008 թվականի մարտի 14-15-ը տեղի ունեցած ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների նստաշրջանում՝ ընդհանուր 68.05 մլն ԱՄՆ դոլարի չափով:

2009 թվականի ՄՀՄԻ բյուջեում անդամ պետությունների ներդրումներն աճելու են 24 %-ով, բացառությամբ Մոլդովայի և Մոնղոլիայի, և ընդհանուր առմամբ, կազմելու են 65 279.6 հզր ԱՄՆ դոլար, որից 9 09.5 հզր ԱՄՆ դոլարը կազմելու են պարտք-վճարումները: ՀՀ –ի անդամավճարը այդ ներդրումներում ևս աճելու է և 2008 թ.–ի 69.9 հզր ԱՄՆ դոլարի փոխարեն, 2009 թվականի կազմելու է 86.7 հզր ԱՄՆ դոլար:

Բյուջեի հիմնական ծախսերը 2009 թ. ընթացքում կազմելու են 62.16 մլն ԱՄՆ դոլար, որը չի ներառելու միջազգային համագործակցությունից ձեռք բերված գումարները:

2009 թվականի ընթացքում բյուջետային ծախսեր հիմնականում նախատեսվում են գիտական հետազոտությունների (34.65 մլն), բազային սարքավորումների կատարելագործման (5.81 մլն), լաբորատոր ենթակառուցվածքների (11.51 մլն), ՄՀՄԻ ենթակառուցվածքների (10.19 մլն) համար: Լաբորատորիաներից ամենամեծ ֆինանսավորումը հատկացվելու է Վ. Ի. Վեկսլերի և Ա. Մ. Բալդինի անվան բարձր էներգիաների ֆիզիկայի և Վ. Պ. Ջելեպովի անվան միջուկային խնդիրների լաբորատորիաների համար՝ համապատասխանաբար՝ 14.06 մլն և 9.70 մլն դոլարի չափով:

Ինստիտուտի տնօրինության կողմից նախապես մշակված կանխատեսումների հիման վրա մինչև 2015 թ.-ը ինստիտուտի բյուջեն աճելու է 2.5 անգամ՝ հասնելով 185 870.7 հզր ԱՄՆ դոլարի, որում ՀՀ ներդրումը կկազմի 227.4 հզր ԱՄՆ դոլար: Նախատեսվող բյուջետային ավելացումները պետք է բխեն մշակվող 2010-2016 թթ. զարգացման 7-ամյա պլանում ամրագրվող դրույթներից, և պետք է նպաստեն ինստիտուտի փորձարարական բազայի կատարելագործմանը, ինչպես նաև գիտության մեջ երիտասարդների ներգրավմանը: Բյուջետային ավելացումներին է միտված նաև ինստիտուտի սեփականությունը հանդիսացող որոշ տարածքների վաճառքից նախատեսվող գումարները:

Նստաշրջանի ընթացքում հաստատվեցին նաև ՄՀՄԻ գիտահետազոտական աշխատանքների և 2009 թվականի միջազգային համագործակցության ծրագրերը: Ինստիտուտի տնօրինությանը երաշխավորվեց համաձայնագրեր կնքել այն երկրների կառավարությունների հետ, որոնց հետ ձևավորվել են հստակ գիտատեխնիկական կապեր՝ համատեղ ծրագրեր իրականացնելու դեպքում ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

Նստաշրջանի ընթացքում ընդունվեց նաև ՄՀՄԻ տնօրենի մասին կանոնադրությունը:

Նստաշրջանի ընթացքում Նեյտրոնային օպտիկան ՄՀՄԻ-ում՝ թեմայով գիտական զեկույցով հանդես եկավ նեյտրոնային ֆիզիկայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ա. Ի. Ֆրանկը:

Հաջորդ նստաշրջանը պլանավորվեց անցկացնել 2009 թվականի մարտի 20-21-ը:

Դուբնա իր այցելության ընթացքում ՀՀ ԳՊԿ նախագահը հանդիպում է ունեցել ՄՀՄԻ-ի տնօրեն Ա. Ն. Սիսակյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ից ՄՀՄԻ գործուղված գիտաշխատողների կարգավիճակի հետ կապված խնդիրներ: Դուբնայում են աշխատում Հայաստանից գործուղված 19 գիտաշխատող, 5 ընտանիքի անդամ և 3 վարձու հիմունքներով աշխատող անձինք:

Համաձայնություն է ձեռք բերվել նաև երիտասարդներին գիտությանը մոտեցնելու նպատակով տարեկան 2-ական մագիստրոս և ասպիրանտ Դուբնա գործուղելու վերաբերյալ:

Այցելության ընթացքում ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովը շրջայց է կատարել Դուբնայի նորաստեղծ «Հատուկ տնտեսական տարածք», որտեղ մասնակցել է «Հատուկ տնտեսական տարածքում» գրանցված կազմակերպությունների ցուցահանդեսին:

2006 թվականին ՌԴ կառավարության կողմից որոշում է կայացվել Դուբնայում «Հատուկ տնտեսական տարածք» (ՀՏՏ) ստեղծելու մասին, որում խիստ հստակեցված է նաև ՄՀՄԻ ունեցած տեղը և դերը:

ՀՏՏ-ում նախատեսվում է այնպիսի կազմակերպությունների գրանցումը, որոնք պետք է զբաղվեն գիտաներդրումային գործունեությամբ, իրականացնեն իննովացիոն նախագծեր: Սկզբնական շրջանում ՀՏՏ-ում գրանցվում են այն կազմակերպությունները, որոնք ի վիճակի են իրենց միջոցները ներդնել՝ կառուցելով արդյունաբերական մոդուլներ, և միայն հետագայում գրանցում կկարողանան ձեռք բերել ավելի մանր ռեզիդենտները, որոնք ՀՏՏ պետք է ներկայանան կոնկրետ իննովացիոն նախագծի բիզնես-պլանով և իրենց գործունեության համար վարձակալեն գրասենյակներ և լաբորատորիաներ:

ՀՏՏ-ում նախատեսվում է ձևավորել նաև բազմաֆունկցիոնալ բժշկահետազոտական միջազգային կենտրոն:

Այցելության ընթացքում Ս. Հարությունյանը հանդիպում է ունեցել նաև տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, քննարկել նրանց կացության, գործունեության, կենսաթոշակային ապահովության և սոցիալական բնույթի այլ խնդիրներ՝ դրանք ՀՀ կառավարությունում քննարկելու և լուծումները գտնելու նպատակով:

Քննարկվել են նաև ՄՀՄԻ-ի երկու կարևորագույն ոլորտներում ՀՀ կոորդինատորների նշանակման հարցերը: